ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 79

«06» օգոստոսի - 2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 31-ին կայացած թիվ 7 նիստի որոշումները:

Առդիր «9» թերթ:

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ ------------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112.61/1088-14
08 08 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 29-Ա

«31» հուլիսի - 2014թ. թիվ 7 նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 7 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ------------------ | ------------------ | --------------- |
| Գ. Սարգսյան | ------------------ | ------------------ | --------------- |
| Խ.Տերտերյան | ------------------ | ------------------ | --------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի հուլիսի «31»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 $^{00}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 31-ի
թիվ 7 նիստի N 29-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 7 նիստի օրակարգը հաստատելու մասին.

2/ Դրամական օգնություն հատկացնելու մասին.

3/ Առաջին դասարանցիներին նվերներ գնելու համար գումար հատկացնելու մասին.

4/ Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի չափագրում և քարտեզագրում իրականացնելու համար գումար հատկացնելու մասին.

5/ «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրելու մասին.

6/ 2014 թվականի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 30-Ա

«31» հուլիսի 2014 թ. — թիվ 7 նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ------------------ | ------------------ | --------------- |
| Գ. Սարգսյան | ------------------ | ------------------ | --------------- |
| Խ.Տերտերյան | ------------------ | ------------------ | --------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ` ---------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի հուլիսի «31»
գ. Լուսագյուղ
Ժամը` 11:30

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 7
նիստի N 30-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1/ Էլյանորա Գրիգորյան - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

2/ Խաչիկ Ենոքյան - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

3/ Ժուլվեռն Գևորգյան - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 31-Ա

«31» հուլիսի 2014 թ. թիվ 7 նիստ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով հաստատված «Այլ մշակութային կազմակերպություններ» 0824 ծրագրի «Նվերներ» 4237 հոդվածից «Գիտելիքի, գրի և դպրության» օրվա կապակցությամբ 100000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել համայնքի առաջին դասարան հաճախող երեխաներին նվերներ գնելու և նվիրելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ---------------- | ---------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի հուլիսի «31»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12⁰⁰

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32-Ա

«31» հուլիսի 2014 թ. թիվ 7 նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՉԱՓԱԳՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 0111 ծրագրի «Մասնագիտական ծառայություններ» 4241 հոդվածից 650000 /վեց հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել համայնքի սեփականություն հանդիսացող հողերի չափագրում և քարտեզագրում իրականացնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ------------------ | ------------------ | --------------- |
| Գ. Սարգսյան | ------------------ | ------------------ | --------------- |
| Խ.Տերտերյան | ------------------ | ------------------ | --------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի հուլիսի «31»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $12^{30}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33-Ա

«31» հուլիսի 2014 թ. թիվ 7 նիստ

## «ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 550000 /հինգ հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին դպրոցի շենքի վերանորոգման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ---------------- | ---------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի հուլիսի «31»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $13^{00}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34-Ն

«31» հուլիսի 2014 թ. — թիվ 7 նիստ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 62-րդ հոդվածի հինգերորդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 29-ի «2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 46-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | --------------- | --------------- | --------------- |
| Գ. Սարգսյան | --------------- | --------------- | --------------- |
| Խ.Տերտերյան | --------------- | --------------- | --------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ --------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի հուլիսի «31»
գ. Լուսագյուղ
ժամը՝ $13^{30}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 31-ի
թիվ 7 նիստի N 34-Ն որոշման

# Ց Ո Ւ Ց Ա Կ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐԱԾ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. 2014 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություն և լրացում.

1/ գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 /պահուստային ֆոնդեր/ ծրագրի վարչական մասի «Պահուստային միջոցներ» 4891 հոդվածի «880400» թիվը փոխարինել «330400» թվով.

2/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 2, դաս 2 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4637 հոդվածի «0» թիվը փոխարինել «550000» թվով: